

ՊԵՐՖԵԿՏՍԱՅԻՆ ԶԵՎԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ԳԱԳԻՆՅԱՆ

Հայերենի և գերմաներենի անցյալի բայածականները ծագումնաբանորեն տարբեր կազմության հանգելով՝ պերֆեկտային ձևեր են կազմում և տիպաբանական տեսանկյունից զարգացման որոշակի ընդհանուր միտումներ ցուցաբերում:

Հոդվածի նպատակն է ներկայացնել հայերենի և գերմաներենի պերֆեկտային ձևերի զարգացումը, գտնել նրանց ընդհանուր միտումները երկու լեզուների պատմական զարգացման մեջ և հիմնավորել տարբերությունների պատճառները:

Եթե հայերենի անցյալ դերբայը կազմվում է հնդեվրոպական *-lo վերջածանցի օգնությամբ, ապա գերմաներենի բայածականը կազմվում է *ga-*, *gi-* նախածանցի միջոցով: Երկու բայածականներն էլ ունեն վիճակի իմաստ, որը թույլ է տալիս նրանց արտահայտել ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական իմաստ:

Սակայն չեզոք իմաստը երկու բայածականներում տարբեր կերպ է դրսևորվում:

Այսպես՝ հայերենի անցյալ դերբայը հիմնականում հանգում է աորիստի հիմքին, որը ունենալով ավարտվածության իմաստ՝ դերբային կատարյալի, վիճակի իմաստ է հաղորդում¹:

Գերմաներենում այդ իմաստով օժտված է *ga-*, *gi-* նախածանցը, որի քերականական նշանակությունը զարգանում է նրա նախնական բառային իմաստից: Հին վերին գերմաներենում *ga-*, *gi-* նախածանցն է գալիս որպես կատարյալ կերպի ձևական ցուցիչ, որը ժամանակի ընթացքում լիովին կորցրել է իր նախնական իմաստը: Վերջինս համապատասխանում է լատ. *cum*, *co-*, ռուս. *с*, *со-*ին: Ըստ այդմ՝ գերմանական լեզուների մեծ մասում տարբերակվում են, օրինակ՝ հվգ. *liggen* «պառկած լինել» – *galiggen* «պառկել», հվգ. *sizzen* «նստած լինել» – *gasizzen* «նստել» հակադրությունները²:

Անշուշտ հարկ է նշել, որ երկու լեզուներում էլ կան բայեր, որոնք անցյալի բայածական չեն կազմում կամ տարբերվում են իրենց կազմությամբ մյուս բայերից: Այսպես՝ գերմաներենում, ինչպես և մյուս գերմանական լեզուներում անցյալի բայածականներ չեն կազմվում:

¹ Հմմտ. Савченко А. Н. Сравнительная грамматика индоевропейских языков. М., 1974, էջ 276:

² См. Жирмунский В. М. История немецкого языка. М., 1956, էջ 269:

1. Անանցողական, տևական գործընթաց նշող բայերից՝ *sein, liegen, schlafen* և այն: Այս բայերի բայածականը ի հայտ է գալիս միջին վերին գերմաներենի շրջանում՝ XII–XIII դարերում, իսկ ավելի շուտ վկայություններում՝ միայն հազվադեպ:

2. Անանցողական, ակնթարթային բայերից, եթե այդ բայերը չեն պարունակում ենթակայի ամբողջական փոփոխության իմաստ՝ *nicken, aufgucken, niesen*: Ուշագրավ է, որ այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ *aufgeguckt, geniest, aufgelacht*, ժամանակակից գերմաներենում որպես որոշիչ հանդես չեն գալիս:

3. Տևական անցողական բայերից, որոնք արտահայտում են ենթակայի և խնդրի իդեալական ներքին կամ ավելի վերացական հարաբերություն՝ *hassen, lieben*:

4. *Haben* բայը, որը մինչև XIII դարը անգլերենում չի ավանդվել: Ժամանակակից գերմաներենում *gehabt, besessen* ձևերը նույնպես չեն գործածվում որպես որոշիչ³:

Այն, որ *haben* բայը չի ունեցել իր բայածականը, հուշում է, որ այն դեռևս չէր քերականացվել հանգույցի գործառնություն: Նույնը վերաբերում է նաև *sein* -ին, քանի որ նրա անցյալի բայածականը *gewesen (gewest)* նույնպես համեմատաբար ուշ է առաջացել, և հին վերին գերմաներենում այն դեռևս զոյություն չուներ: Այս բայի պերֆեկտային ձևի ծագումը վերագրվում է այն ժամանակաշրջանին, երբ կերպային տարբերակումը արդեն մթազմել էր⁴:

Այլ կերպ՝ չեն կազմվում այնպիսի բայածականներ, որոնք չեն արտահայտում առարկայի շատ թե քիչ կոնկրետ, արտաքնապես զգացվող վիճակ⁵:

Յին հայերենում նույնպես կան անցյալ դերբայի այլ կազմություններ՝ արտահայտված ներկայի հիմքով՝ հատկապես *ե* հիմքով և *ան* սոսկածանցով բայերի դեպքում՝ *անցանել - անցեալ, գտանել - գտեալ, հատանել - հատեալ*: Ան- ածանցը նախկինում ունեցել է վիճակի, կայական, տևական իմաստ և կազմում է հայերենում անկատարի հիմքը⁶:

Գ. Ջահուկյանը, անդրադառնալով ժամանակակից հայերենի *ան* և *են* մասնիկներին, նույնպես նշում է նրանց տևականությունը⁷:

Այս ամենը թույլ է տալիս մեզ եզրակացնել, որ հայերենում տևական բայերի բայածականները ևս չեն ունեցել վիճակի պերֆեկտիվ իմաստ:

Ավելի ուշ տևական բայերը աստիճանաբար նույնպես կազմում են արրիստով անցյալ դերբայ: Սրա մասին է վկայում այն հանգամանքը, որ *ե, ի* հիմքերով բայերի բայածականները դեռևս հին հայերենում կազմվում են ինչպես արրիստի այնպես էլ անկատարի հիմքերից՝ *գրեալ - գրեցեալ, բնակեալ - բնակեցեալ*⁸:

³ Տե՛ս **Маслов Ю. С.** Из истории второго причастия германских языков // «Язык и мышление». Т. XI. М.–Л., 1948, էջ 205-206.

⁴ Տե՛ս **Solms H., Wegera K.**, Frühneuhochdeutsche Grammatik, Tübingen, 1993, էջ 386.

⁵ Տե՛ս **Маслов Ю. С.**, նշվ. աշխ., էջ 207:

⁶ Տե՛ս **Klingenschmitt G.**, Das altarmenische Verbum, Wiesbaden, 1982, էջ 121:

⁷ Տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 252-253:

⁸ Հմմտ. **Վ. Գ. Համբարձումյան**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004, էջ 120:

Գերմաներենի զարգացման հաջորդ փուլերում թեև շարունակվում է տևական բայերի անցյալի բայածականի առանց *ge-*ի գործածությունը, սակայն ժամանակի ընթացքում *ge-* ն տարածվում է բոլոր բայերի վրա:

Այսպես՝ *ge-*ն բացակայել է մվգ-ի այն *Partizip II*-ներում, որոնք իրենց բառային իմաստով արդեն ունեն սահմանային բնույթ, օր.՝ *bräht* «բերած», *kommen* «եկած», *worden* «դարձած» և այլն, ինչպես նաև չանջատվող նախածանցներով և տևական իմաստ ունեցող բայերում, օր.՝ *verschlossen*, *erschlagen*: Մնացած բոլոր դեպքերում *ge-*ն կցվում է *Partizip II*-ին արդեն հվգ.-ում՝ որպես պարտադիր ցուցիչ՝ *ginoman*, *gisucht*: Հետագայում, իհարկե, այն կորցնում է իր նախնական կերպային իմաստը⁹:

Արդյունքում՝ միջին և նոր գերմաներենում *ge-* նախածանցը ամրանում է բոլոր ձևերում՝ արտահայտելու համար սահմանային (*предельный*) իմաստ: Ավելի ուշ առանց *ge-*ի տարբերակը կամ ժամանակի ընթացքում լրիվ դուրս է գալիս գործածությունից, օր.՝ *genießen*, *gewinnen*, *gelangen* և այլն, կամ պահպանվում է, և տեղի է ունենում իմաստային համապատասխան տարբերակում, օր.՝ *hören*, *gehören*, *stehen*, *gestehen*. Այս դեպքում արդեն կատարյալի իմաստը սովորաբար կորչում է:

Տևական բայերի հետ *gi-*ի գործածությունը արևմտագերմանական լեզուներում շատ շուտ է սկսվում, որն էլ հուշում է, որ *gi-* նախածանցը կորցրել է իր կերպային իմաստը:

Ժամանակի ընթացքում ձևավորվում է բայածականի այն իմաստը, որի համաձայն արտահայտվում է անցյալի գործողությունը, որը ներկայում ունի արդեն իր հետևանքը, օրինակ՝ էպիկական պոեզիայի հուշարձաններում: Ըստ Մասլովի՝ *Partizip II* – ի արտահայտած անցյալի իմաստը առանց հարաբերության ներկայում նրա ունեցած արդյունքի հետ ի հայտ է գալիս որպես ավելի ուշ առաջացած գիծ, որը կարող է լատիներենի ազդեցություն լինել: Այստեղ միտում է զգացվում բայածականի բայականացման¹⁰:

Միջին ստորին գերմաներենում *ge-*ն լիովին սղվում է կամ վերածվում է ձայնորդ [j] -ի: Այդ իսկ պատճառով այն արդեն լիովին բացակայում է ժամանակակից գերմաներենի բարբառներում, օր.՝ *köft* «գնած», *hulst* «օգնած»¹¹:

Ներկա ժամանակում *ge-*ն երբեմն գործածվում է ապառնի ժամանակն արտահայտելու համար, օր.՝ հվգ *gegangen*: Սա նույնպես ունի ընդհանուր տիպաբանական արժեք, քանի որ կատարյալի նախածանցով ներկա ժամանակը հնդեվրոպական այլ լեզուներում փոխարինում է ապառնի ժամանակաձևին՝ ռուս. *пуш- напуш*:

Այսպիսի գործածության հանդիպում ենք նաև միջին վերին գերմաներենի շրջանում՝ *Ich gemache in vollen kragen*. “Ich werde ihnen den Hals schon voll stopfen” (XII դար)¹²:

⁹ Տե՛ս *Жирмунский В. М.* История немецкого языка. М., 1956, էջ 271:

¹⁰ Տե՛ս *Маслов Ю. С.*, նշվ. աշխ., էջ 198- 207:

¹¹ Տե՛ս *Жирмунский В. М.*, նշվ. աշխ., էջ 271:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 270:

Այսպիսով՝ հին գերմաներենում անցողական բայերի անցյալի բայածականում գոյակցում էին երկու քերականական իմաստ՝ կատարյալ կերպի և կրավորական սեռի¹³, որոնց հիմքում ընկած է վիճակի իմաստը:

Ունենալով վիճակի իմաստ՝ անցյալի բայածականը գերմաներենում ներունակ է արտահայտելու և՛ չեզոք, և՛ ներգործական, և՛ կրավորական իմաստ՝ կախված համապատասխան օժանդակ բայից:

Հայերենում ներգործական բայերի անցյալ դերբայը առանց ձևական փոփոխության նույնպես կարող է արտահայտել ներգործական և կրավորական սեռի նշանակություն՝ գրեալ = գրել, գրվել (վաղակատար), գրած, գրված, կազմեալ = կազմել, կազմվել (վաղակատար), կազմած, կազմված: Չեզոք սեռի բայերը միայն չեզոք սեռի իմաստ են արտահայտում, օրինակ՝ անցեալ = անցել (վաղակատար), անցած, անկեալ = ընկել (վաղակատար), ընկած¹⁴:

Ինչպես կարելի է նկատել, այստեղ նույնպես իր դերն ունի անցողականի և անանցողականի հակադրությունը:

Այսպիսով՝ եթե հայերենում կատարյալի իմաստն արտահայտվում է հենց բայահիմքի միջոցով, ապա գերմաներենի բայածականը վիճակի իմաստն արտահայտում է ge- նախածանցի միջոցով, որը կցվում է ներկայի հիմքին:

Երկու լեզուներում անցյալի բայածականների չեզոքությունը բերում է անցողական և անանցողական բայերի հակադրությանը պերֆեկտային ձևերի կազմության դեպքում: Ընդ որում, հարկ է նկատել, որ երկու լեզուներում էլ պերֆեկտն ունի վերլուծական կազմություն: Եթե հայերենում անցողական և անանցողական բայերի հակադրությունն արտահայտվում է սեռական և ուղղական ենթակաների հակադրությամբ, ապա գերմաներենում՝ haben և sein օժանդակ բայերի հակադրությամբ:

Այսպես՝ հին հայերենում անցողական բայերի հետ ներգործական իմաստի արտահայտման համար գործածվում է սեռականով ենթական, իսկ անանցողականի հետ՝ ուղղականով, օր.՝

Հատուած գնացեալ Վարդգէս Մանուկն... (անանցողական)

Ճաշ գործեալ Արզաւանայ ի պատիւ Արտաշիսի...¹⁵ (անցողական):

Ինչ վերաբերում է անցյալ դերբայի խոսքային իրացումներին, ապա այն գործածվել է որպես՝

1. ածական որոշիչ (նախադաս և հետադաս): Հետադաս անցյալ դերբայը հոլովով և թվով հիմնականում համաձայնվում է գոյականների հետ¹⁶.

Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի...¹⁷:

¹³ Տե՛ս Серебренников Б. А. Вероятностные обоснования в компаративистике. М., 1974, էջ 222:

¹⁴ Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1964, էջ 161:

¹⁵ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1981, (II, ԿԵ), էջ 240, (I, L), էջ 100:

¹⁶ Հմմտ. Հ. Մ. Ավետիսյան, Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1992, էջ 100, Stempel R., Die infiniten Verbalformen des Armenischen, Frankfurt am Main, Bern, New-York, 1983, էջ 27:

¹⁷ Աւետարան ըստ Մատթեոսի (ԺԵ-44), Բնագրային օրինակը վերցրել ենք <http://titus.uni-frankfurt.de/indexe.htm> կայքից, որտեղ գետեղված է Հովհաննես Զոհրապյանի հրատարակած «Աստվածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց», Վենետիկ, 1805, բնագիրը:

2. ստորոգյալի արժեքով.

*Ձի կամ մեռցուք, և աղիս մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա **ցուցեալ**՝ ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք¹⁸:*

3. ստորոգյալ՝ *եմ* հանգույցով, հատկապես անանցողական և անցողական բայերի կրավորական իմաստի արտահայտման դեպքում.

*Ի նոյն իսկ գիրս **գրեալ է**՝ թէ եղ զնոսա ի հաստատութեան երկնից¹⁹:*

4. ստորոգյալ՝ *եմ* հանգույցով, անցողական բայերի ներգործական իմաստի արտահայտման դեպքում.

*Ձպայն իսկ իմ աչօք **տեսեալ է**²⁰:*

5. ստորոգյալ՝ *լինիմ*, *կամ* և *ունիմ* հանգույցներով.

*...յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն **մեծարեալ լինէր**²¹:*

***Ընկեցեալ կայր** այսուհետև ոսկի և ոչ ոք առնոյր²²:*

*...ինքն իսկ **բռնացեալ ունէր** զթագաւորանիստ տեղիս²³:*

6. դերբայական կառույցի բաղադրիչ, որտեղ այն ցույց է տալիս դիմավոր բային նախորդած կամ զուգահեռ կատարված գործողություն.

*Իսկ Յաբէլին զայն **լուեալ** փութանակի հասանէր առ Դանիէլն...²⁴*

Չին հայերենում անցյալ դերբայն առավել հաճախ գործածվում է ստորոգյալի դերում՝ հանգույցով կամ առանց հանգույցի: Ինչ վերաբերում է հանգույցով գործածություններին, ապա առավել հաճախ են հանդիպում **եմ** հանգույցով կառույցները, այն էլ հիմնականում անանցողական բայերի հետ:

Ինչպես վերը նշվեց, հայերենի անցյալ դերբային գերմաներենում համապատասխանում է անցյալի բայածականը, որը նույնպես հիմք է հանդիսանում պերֆեկտային ձևերի կազմման համար գերմաներենում և պահպանում է անցողականի և անանցողականի հակադրությունը: Անցողականի և անանցողականի հակադրությունն այստեղ դրսևորվում է տարբեր երկբայ կառույցների միջոցով: Անցողական բայերը հանդես են գալիս հիմնականում *haben*, *eigan*, իսկ անանցողականները՝ *sein*, հազվադեպ, հատկապես տևական անանցողականները՝ *haben* օժանդակ բայերի հետ:

Ընդ որում՝ հին վերին գերմաներենում անցյալի բայածականը նույնպես ունի և՛ որոշչային, և՛ ստորոգելիական գործածություն: Երկու դեպքում էլ այն հոլովվում է: Որոշչի գործածությունը ակնհայտ է դառնում անցողական բայերի հետ՝ *haben*, *eigan* -ով կառույցների դեպքում, ստորոգելիական գործածությունը՝ անանցողական բայերի հետ՝ *sein*-ով կառույցների դեպքում:

¹⁸ **Սովսես Խորենացի**, նշվ. աշխ. (I, ԺԱ), էջ 42:

¹⁹ **Եզնիկ Կողբացի**, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 130:

²⁰ Նույն տեղում, էջ 70:

²¹ **Կորիւն**, Վարք Մաշտոցի (հատվածներ): «Չայոց լեզվի պատմության քրեստոմատիա. Գրաբար և միջին հայերեն», Եր., 1987, էջ 54:

²² **Եղիշէ**, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Եր., 1957, էջ 134:

²³ Նույն տեղում, էջ 200:

²⁴ Նույն տեղում, էջ 88:

Այսպես՝ *haben*-ը և *eigan*-ը՝ «ունենալ, տիրել» հանդես են գալիս բոլոր անցողական բայերի և անկատար (տևական) իմաստ ունեցող անանցողական բայերի հետ, *sein*-ը՝ անանցողական կատարյալի իմաստ ունեցող բայերի հետ՝

հվգ. *phîgboum habêta sum giflanzôtan (Տասիանոս) «Ունն մեկը թզենի էր տնկել»*։

Այս նախադասության մեջ *phîgboum* - ը նախապես *ունենալ* բայի ուղիղ խնդիրն է։ *giflanzôtan - Á flanzôn` «տնկել»* բայի անցյալի բայածականն է, որը հանդես է գալիս որպես որոշիչ և ցույց է տալիս նախորդող գործողության վիճակ²⁵։

Արդեն հվգ.- ուն *haben/sein* լիիմաստ բայերը սկսում են վերածվել օժանդակ բայերի, հոլովված բայածականը կորցնում է հոլովական ցուցիչը և իր առնչությունը խնդրի հետ։

Ընդ որում, նախապես քերականացվում է անցողական բայերի պերֆեկտը (*thaz eigut ir gehorit*), որից հետո այն տարածվում է անանցողականների վրա²⁶։

Ինչ վերաբերում է *haben* -ով շրջասության ծագմանը, ապա այն նախորդել է *sein*-ով շրջասությանը և համապատասխանում է ժողովրդալատինական-ռոմանական համապատասխան կառույցին²⁷։

Sein -ով կապակցությունների դեպքում բայածականը հանդես է գալիս որպես ստորոգելի. *Er ist gefallen-* ը նախկինում մշանակել է «Նա ընկած է»։ Այդ է պատճառը, որ բայածականը նախապես հոլովվել է որպես ածական և համաձայնեցվել ենթակայի հետ²⁸։

tho argangana warun ahtu taga

Da vergangen(e) waren acht Tage²⁹.

Վերլուծական պերֆեկտը զուգահեռաբար զարգացել է նաև մյուս գերմանական լեզուներում։ Այսպես՝ արևմտյան և հարավային գերմաների մոտ այն ի հայտ է եկել VIII դարից սկսած։ Բացի մաքուր գրական լեզվից, այս կառույցը՝ որպես պերֆեկտային ձև, գործածվում է գերմաներենի հյուսիսային բարբառներում։ Վերին գերմաներենում, այլ կերպ՝ հարավային գերմանական բարբառներում հաճախ գործածվում է նաև պատմողական ոճում, այսպիսով փոխարինելով արդեն անհետացած Praeterit -ին, օր.՝ *er habēt in thār gizaltan drōst managfaltan* (Օտֆրիդ, IV, 15, 55)³⁰։ Ինչպես նկատում է Օ. Բեհագելը՝ պերֆեկտի շրջասությունը ի հայտ է եկել որպես անցյալ անկատարի (պրետերիտ) փոխարինող՝ ժամանակի ընթացքում տարածվելով բոլոր բայերի վրա և ընկալվելով որպես ակտիվ³¹։

Վերադառնալով անցողականի և անանցողականի հակադրությանը՝ մշենք, որ անանցողական բայերի դեպքում տարբերակվում են կատարյալ

²⁵ Տե՛ս **Dal Ing**, Kurze deutsche Syntax, Tübingen, 1966, էջ 121, **Moskalskaja O. J.**, Deutsche Sprachgeschichte, M., 1977, էջ 117։

²⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 122։

²⁷ Տե՛ս **Naumann Hans**, նշվ. աշխ., էջ 119։

²⁸ Տե՛ս **Dal Ing.**, նշվ. աշխ., էջ 122, **Moskalskaja O. J.**, նշվ. աշխ., էջ 118։

²⁹ **Dal Ing.**, նշվ. աշխ., էջ 122-122։

³⁰ Տե՛ս **Naumann Hans**, Kurze historische Syntax der deutschen Sprache, Strassburg, 1915, էջ 119։

³¹ Տե՛ս **Behagel O.**, Deutsche Syntax-Eine geschichtliche Darstellung, Band 2, (Wortklassen und Wortformen), Heidelberg, 1924, էջ 397։

և անկատար բայերի կազմությունները: Եթե բոլոր կատարյալ անանցողականները իրենց պերֆեկտը կազմում են *sein*-ով, ապա անկատար անանցողականները (*durativ*), որոնց անցյալի բայածականը որպես ստորոգելի հանդես գալ չէր կարող, նախապես վերոհիշյալ երկու ձևերից ոչ մեկն էլ չէին կարող կազմել: Դրա փոխարեն գործածվել է անցյալ անկատարը (պրետերիտ)³²: Ինչպես վերը նշվեց, անկատար անանցողականներն անգամ անցյալի բայածականի ձև չունեին:

Արդեն հին վերին գերմաներենի ժամանակաշրջանի վերջից անկատար անանցողականները սկսում են գործածվել *haben* -ով: Ենթադրվում է, որ դա տեղի է ունեցել այն ժամանակ, երբ խնդրի զեղչման հետ կապված, չհոլովված, այսպիսով արդեն ոչ որպես ստորոգելի հանդես եկող ձևերը հաղթել են³³:

Երբեմն, իհարկե, շեղումներ եղել են տարբեր բարբառներում, ինչպես՝ նվգ. *mir ist getroumet, ich hân gevolget*, որը կարելի է բացատրել մի կողմից լեզվական ոչ ճիշտ զգացողությամբ, մյուս կողմից՝ բայերի կերպի փոփոխված ընթանմամբ, քանի որ շատ բայեր կարող են ինչպես պերֆեկտիվ, այնպես էլ իմպերֆեկտիվ գործածվել, կախված այն բանից՝ վիճակի սկիզբ թե տևականություն են ցույց տալիս, օր.՝ նվգ. *Was gelegen. Hât gelegen, նվգ. Ich bin ans andere Ufer geschwommen. Ich habe mein Teil geschwommen*³⁴:

Շարժման բայերի հետ վաղ ժամանակներում հանդես է եկել *haben* կամ *sein* -ը, քանի որ այդ բայերը ունեն երկակի կերպ: Երբ շարժման բայը ցույց է տալիս տևական գործողություն, ապա իմաստը անկատար է, և այն պահանջում է *haben*, իսկ շարժման տվյալ պահի սկիզբը, ավարտը կամ տարածական նպատակը արտահայտելու դեպքում կառույցի նշանակությունը պերֆեկտիվ է և պահանջում է *sein*.

Er hat viel gewandert. Er ist nach Prag gewandert. Wir haben stundenlang getanzt. Sie sind aus dem Hause getanzt.

Ժամանակակից գերմաներենում *sein* -ի գործածությունը ընդլայնվել է, այն այժմ ամենուրեք գործածվում է, երբ բայն արտահայտում է տեղաշարժ:

Հին հայերենում նույնպես շարժման բայերը երբեմն հանդես են եկել սեռական ենթակայով, օր.՝

*Իսկ նորա յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա...*³⁵

*Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմիանս...*³⁶

Եւ ի դառնալ մանկանցն Պարսից, ընդ հուսպ դարձեալ մերոցն զհետ նոցա... «մերոնք անմիջապես հասնում էին նրանց հետևից»³⁷,

*որոյ երթեալ ի մայրաքաղաքն Դուին...*³⁸

³² Տե՛ս Naumann Hans, նշվ. աշխ., էջ 120:

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 120:

³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 121:

³⁵ Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց: «Հայոց լեզվի պատմության քրեստոնատիա. Գրաբար և միջին հայերեն», Եր., 1987, էջ 317:

³⁶ Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., էջ 339:

³⁷ Նույն տեղում, էջ 368:

³⁸ Ղեւոնդ, Պատմութիւն, (8-8d դար): «Հայոց լեզվի պատմության քրեստոնատիա. Գրաբար և միջին հայերեն», Եր., 1987, էջ 383:

Ինչպես վերը նշվեց, հայերենում նույնպես ժամանակի ընթացքում վերանում են սեռական ենթակայով կառույցները: Այսպես՝ միջին հայերենում արդեն բացակայում է անցողական և անանցողական բայերի հակադրությունը, ինչպես նաև սեռական ենթակայով կառույցները³⁹, թեև XIII դարի հիշատակարաններում սրանք դեռևս պահպանվել են՝ *սկիզբն արարել է նորա՝ «նա է սկսել»*⁴⁰:

Սակայն XIII դարի հիշատակարանների լեզվում արդեն ի հայտ են գալիս շեղումներ հին հայերենի կառույցներից, ինչպես օրինակ՝ ներկայի հիմքով անցյալ դերբայի հետևյալ անսովոր կազմությունները՝ *արեալ*, փխ. *արարեալ*, *տեսանեալ*, փխ. *տեսեալ* և հակառակը՝ աորիստի հիմքը՝ սովորական ներկայի փոխարեն՝ *թարգմանեցեալ*, փխ. *թարգմանեալ*⁴¹:

Ինչ վերաբերում է անցյալ դերբայով կառույցների ժամանակային իմաստներին, ապա նրանք XIII դարի հիշատակարաններում կիրառվում են թե՛ վաղակատար, թե՛ հարակատար և թե՛ անկատարի իմաստով (հմմտ.՝ յորժամ էի դեգերել «երբ դեգերում էի»), կարող է անցյալ կատարյալ արտահայտել և առանց օժանդակ բայի, ինչպես՝ ... *և ժողովեալ անթիւ բազմութիւնս, գնացեալ յաշխարհն Յրեաստան և առել բազում քաղաքաց և խաղաղութեամբ դարձեալ յարևելս*: «Հավաքեց անթիվ բազմություն, գնաց Յրեաստան աշխարհը, առավ բազմաթիվ քաղաքներ և խաղաղությամբ դարձավ արևելք»⁴²: Գերմաներենում նույնպես Partizip II-ը պերֆեկտից ու պասիվից դուրս ունի համանման իմաստները՝

1. դիմավոր բայի գործողությանը նախորդող գործողության վիճակ,
2. գործողություն, որը նախորդում է դիմավոր բայի արտահայտած ժամանակին, սակայն այդ գործողության շարունակությունը չէ ներկայում,
3. գործողություն, որը դիմավոր բայի արտահայտած ժամանակին հանընթաց է⁴³:

Հին հայերենին հատուկ բացարձակ դերբայական կառույցներին միջին հայերենում փոխարինում են դիմավոր բայով երկրորդական նախադասությունները *որ* շաղկապով⁴⁴: Առկա չէ նաև անցյալ դերբայի դիմավոր իմաստով կիրառությունը⁴⁵. անցյալ դերբայի տարբեր գործածությունների հետ զուգահեռ ի հայտ է գալիս նաև նոր դերբայական ձև՝ վաղակատար դերբայը, որն անցյալ դերբայի հնչյունափոխված տարբերակն է: Անցյալ դերբայը աստիճանաբար վերածվելով վաղակատարի և հանդես գալով հնչյունափոխված ու ոչ հնչյունափոխված տարբերակներով, պահպանում է երկու կիրառություն՝ որոշչային և *եմ*, *լինիմ* և *կամ* բայերի հետ երկրորդական բաղադրյալ ժամանակներ կազմելու: XII դարում արդեն վաղակատար դերբայը գործածելի էր՝ *-ել* և *-եր* վերջավորություններով: Երկուսն էլ

³⁹ Տե՛ս **Ս. Մ. Անթոսյան**, Բայը և նրա խոնարհման համակարգը: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Եր., 1972, հ. Ա, էջ 307:

⁴⁰ Տե՛ս **Լ. Ս. Հովսեփյան**, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Եր., 1997, էջ 85:

⁴¹ Տե՛ս նույն տեղը, էջ 76:

⁴² Նույն տեղում, էջ 84-85:

⁴³ Տե՛ս **Behaghel O.**, նշվ. աշխ., էջ 401:

⁴⁴ Տե՛ս **Յ. Կարստ**, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002, էջ 372:

⁴⁵ Տե՛ս **Ս. Մ. Անթոսյան**, նշվ. աշխ., էջ 307:

ծագում են անցյալ դերբայի *-եալ* վերջավորությունից *եա>ե* ձայնավորների և *լ>ր* ձայնորդների հնչյունափոխությամբ⁴⁶: Օր.՝

*Քար են բերեր սարերոյս,
փուշ են կրեր ձորերոյս,
պատ են բլրորեր այգոյս*⁴⁷:

Ե՛վ հին հայերենում, և՛ միջին հայերենում հազվադեպ հանդիպում ենք նաև այս դերբայի՝ *ուճիմ* բայի հետ գործածության դեպքերի: Սակայն այս ձևերը խորթ, ոչ արմատավորված են համարվում հայերենում՝ դրանց սակավաթիվ լինելու պատճառով⁴⁸:

Վաղ նոր վերին գերմաներենում *haben*-ի և *sein*-ի ընտրությունը էապես կախված է բայի կերպից, շարժման (*mutativ*) անանցողական բայերի դեպքում *sein* է, մյուս անանցողականների դեպքում, ինչպես օրինակ՝ հայցական, սեռական, տրական խնդիր պահանջող բայերի դեպքում՝ *haben*: Շարժման որոշ բայեր էլ տարբեր տարածքային տարբերակներում տարբեր օժանդակ բայերով են գործածվում: *liegen, sitzen, stehen* բայերի հետ հարավային բարբառներում, երբեմն նաև կենտրոնական շրջաններում գերակշռում է *sein*-ը⁴⁹:

Այս ժամանակաշրջանում նույնպես *ge*-ով կառույցները հանդես են գալիս դիմավոր ձևերում, որին զուգահեռ ավելի հաճախակի են դառնում *haben* և *sein*-ով պերֆեկտային ձևերը: Ընդ որում՝ սրան նպաստում է հին գերմաներենի որոշ բարբառների բանավոր խոսքում *Praeterit* -ի անհետացումը⁵⁰:

Ուշագրավ է, որ հին հայերենում անցյալ դերբայի հետ հանդես են գալիս նաև *կամ* և *լինիմ* հանգույցները և հիմնականում արտահայտում կրավորականության իմաստ:

*...յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր*⁵¹:

*Ընկեցեալ կայր այսուհետև ոսկի և ոչ ոք առնոյր*⁵²:

Այս նույն կառույցները պահպանվել են նաև միջին հայերենում: Բացի *են* օժանդակ բայի հետ վաղակատար ժամանակներ կազմելուց, վաղակատար դերբայը *լինիմ* և *կամ* բայերի հետ կազմում է երկրորդական բաղադրյալ ժամանակներ⁵³: *Լինիմ* բայի հետ հարադրվելիս այն արտահայտում է հարակատարի իմաստ: Օր.՝ *Եւ թէ որդիքն մեռել լինիմ* («մեռած լինեն») *թագաւորիմ*⁵⁴:

Հետագայում, իհարկե, այս կառույցը հարակատարի իմաստով իր տեղը զիջում է *հարակատար* + *լինիմ* նոր կառույցներին⁵⁵:

⁴⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 308:

⁴⁷ **Գրիգորիս Աղթամարցի, Եր.**, 1963, էջ 254: Հմմտ. «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. 2, Եր., 1975, էջ 227:

⁴⁸ Տե՛ս **Յ. Կարստ**, նշվ. աշխ., էջ 345:

⁴⁹ **Solms H., Wegera K.**, նշվ. աշխ., էջ 386-387:

⁵⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 386-389:

⁵¹ **Կորիւն**, նշվ. աշխ., էջ 54:

⁵² **Եղիշէ**, նշվ. աշխ., 1957, էջ 134:

⁵³ Տե՛ս **Ս. Մ. Անթոսյան**, նշվ. աշխ., էջ 309:

⁵⁴ «Հայոց լեզվի պատմական քերականություն», էջ 226:

⁵⁵ Նույն տեղը, էջ 232:

Գերմաներենում նույնպես կրավորական ձևերը զարգացել են *sîn* և *werdan* բայերով ու անցյալի բայածականով կազմած կառույցներից, որոնք ժամանակի ընթացքում ձեռք են բերում նաև որոշակի իմաստային տարբերություն՝ արտահայտելով գործողության և վիճակի կրավորական իմաստ⁵⁶:

Նշենք, որ ժամանակակից հայերենում վաղակատար (անցյալ) դերբայը պահպանում է իր միայն մեկ՝ բաղադրյալ ժամանակաձևեր կազմելու կիրառությունը, այն էլ միայն *եմ* հանգույցով:

Եալ>ել պատմական հնչյունափոխությունը ձևական փոփոխություն լինելուց բացի, մեծ չափով նպաստել է դերբայի վերաիմաստավորմանը որպես վաղակատար՝ բայի խոնարհման համակարգի վերակազմավորման ընթացքում:

Անցյալ դերբայի անկախ կիրառությունը որոշչային և պարագայական արժեքով աստիճանաբար մարել է: Այն չի պահպանվել ոչ գրական աշխարհաբարում, ոչ էլ բարբառներում: Միջին հայերենի համար Անթոսյանը նշում է միայն մեկ բառ՝ *տառապել մարդ*, սակայն սա ածականացված, նույնիսկ գոյականացված կիրառություն է՝ «հիվանդ» նշանակությամբ⁵⁷:

XV-XVII դարերի համար Անթոսյանը բերում է Հովհ. Թլկուրանցու օրինակը՝

*Ես եմ ափ մի հողէ, դուն հրեղէն ես՝
Քանի գիմ այրեցել սիրտս արյունես*⁵⁸:

Աշխարհաբարում վաղակատար դերբայը ավելի որոշակիորեն հանդես է գալիս միայն դիմավոր ձևերի կազմում՝ որպես կախյալ դերբայ: Որոշչի գործառնություն կարող են հանդես գալ միայն հին հայերենի անցյալ դերբայները, որոնք լիովին մուտք են գործել ածականների շարք՝ Մեռյալ ծով, հավելյալ արժեք:

Ի տարբերություն հայերենի՝ անցյալի բայածականը գերմաներենում լիովին պահպանում է որոշչի գործառնությամբ՝ *der geschriebene Brief*:

Երկու լեզուներում էլ իմաստային զարգացման տեսակետից առկա է անցում կերպային ավարտվածությունից ժամանակային ավարտվածության: Երկու լեզուներում էլ բայածականներն ունեն նախնական վիճակի իմաստ, որը հետագայում վերաճում է պերֆեկտային իմաստի: Եթե հայերենում այն բխում է հիմքից, ապա գերմաներենում ձեռք է բերվում նախածանցի միջոցով: Պերֆեկտը երկու լեզուներում վերլուծական է և զարգացել է երկբայ կապակցություններից:

Արտահայտելով ավարտվածության, վիճակի չեզոք իմաստ՝ հայերենի անցյալ դերբայն ու գերմաներենի անցյալի բայածականը աստիճանաբար ամրագրվում են ստորոգյալի բաղադրիչի գործառնությամբ: Նրանց չեզոքությունն էլ վերածվում է ներգործական իմաստի՝ հայերենում ենթական սեռական հոլովով դնելու ճանապարհով, գերմաներենում՝ *haben* շրջասության միջոցով:

⁵⁶ Հմմտ. **Moskalsjaja O. J.**, նշվ. աշխ., էջ 116:

⁵⁷ Տե՛ս **L. Ս. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 81:

⁵⁸ **Հովհ. Թլկուրանցի**, Տաղեր, Եր., 1960, էջ 151:

Համեմատելով հայերենի և գերմաներենի պերֆեկտային ձևերի զարգացումը՝ կարող ենք փաստել, որ երկու լեզուների անցյալ դերբայները ցուցաբերում են զարգացման թե՛ ընդհանուր և թե՛ տարբեր միտումներ:

1. Անցյալ դերբայը և նրա համարժեքը գերմաներենում ունի արդեն կատարյալի չեզոք իմաստ: Եթե հայերենում այն սերում է հիմքից, ապա գերմաներենում արտահայտվում է նախածանցի միջոցով:

2. Երկու լեզուների նախնական փուլերում առկա է անցողականության և անանցողականության հակադրությունը: *Ունենալ* բայով շրջասությանը հայերենում համապատասխանում է հիմնականում սեռական հոլովով դրված կառույցը: Հայերենի հետագա զարգացման ընթացքում այդ հակադրությունը անհետանում է, գերմաներում՝ ոչ:

3. Անանցողական տևական իմաստ ունեցող բայերի անցյալի բայածականները իրենց կազմությամբ տարբերվում են մյուս անանցողականներից:

4. Անանցողական շարժման բայերը երկու լեզուներում էլ պերֆեկտային ձևեր կարող էին կազմել ինչպես *sein*, *ten* բայերի միջոցով, այնպես էլ *haben* շրջասությամբ և սեռական ենթակայով:

5. Եթե գերմաներենի անցյալի բայածականը պահպանել է որոշի իր գործառույթը, ապա հայերենի վաղակատար դերբայը չի պահպանել:

6. Թե՛ ժամանակակից հայերենում և թե՛ գերմաներենում պերֆեկտի ժամանակաձևը պահպանվել է:

АРМИНЕ ГАГИНЯН – Развитие перфектных форм в армянском и немецком языках. – Сравнивая развитие перфектных форм в армянском и немецком языках, автор обнаруживает, что причастия прошедшего времени в обоих языках выявляют как общие, так и различные тенденции:

1. Причастие прошедшего времени и его эквивалент в немецком уже имеет нейтральное значение перфективности. Если в армянском оно восходит к основе, то в немецком это причастие выражается с помощью префикса.

2. На более ранних этапах обоих языков существует оппозиция переходности и непереходности. Немецкой перифразе с глаголом *иметь* в армянском главным образом соответствует конструкция с родительным падежом. В процессе дальнейшего развития армянского эта оппозиция исчезает, а в немецком – сохраняется

3. Причастия непереходных глаголов прошедшего времени со значением дуративности отличаются по своей форме от других непереходных глаголов.

4. Непереходные глаголы движения в обоих языках могли образоваться как с помощью глаголов *sein*, так и посредством перифразы *haben* или с помощью подлежащего в родительном падеже.

5. Если причастие прошедшего времени в немецком сохранило функцию определения, то давнопрошедшее причастие армянского языка потеряло эту функцию.

6. И в современном армянском, и в немецком языках временная форма перфекта сохранилась.

ARMINE GAGINYAN – *The Development of the Perfective Forms in Armenian and German.* – By comparing the development of the perfective forms in Armenian and German we can state that in both languages past participles reveal common and different tendencies.

1. Past participle in both languages has a neutral perfective meaning. If in Armenian it originates from the stem, in German it is expressed with a prefix.

2. In the earlier phases of the development of both languages the opposition of the transitivity and intransitivity is present. The periphrasis with *have* in German corresponds to the construction with the genitive case in Armenian. During further development of the Armenian language this opposition disappears but in German it survives.

3. The participle of the intransitive durative verbs differs in their formation from the other intransitive verbs.

4. The intransitive motion verb in both languages could be formed with *sein* *էլ* verbs as well as with *haben* periphrasis or genitive subject.

5. The past participle of the German language has preserved the attribute function, the Armenian past participle hasn't.

6. In modern Armenian and German the perfect tense is preserved.